ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-9/24-1

ք. Երևան

02 -ը նոյմբերի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Դիլանյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրից** ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում **է 48,510,000(քառասունութ միլիոն հինգ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահման-ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	**Ք. Երևան, Մարգարյան 37, տարածք 131**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**
Հ/Հ 900011144129	**Հ/Հ 1930048363450100**
ՀՎՀՀ 00867415	**ՀՎՀՀ 02621803**
ՀՀ պաշտպանության նախարարության	**տնօրեն**
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն	
Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-9/24-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանում	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ	ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԸ	ԱՐՏԱԴՐՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ
1.	**Վիրաբուժական իմպլանտներ** /Գանգադիմային հատվածի ռեկոնստրուկցիաների համար նախատեսված բիոդեգրադացիայի ենթարկվող մոդելավորվող թիթեղների և պտուտակներ հավաք՝ տեղադրման համար անհարաժեշտ գործիքների հետ/	Թիթեղները և պտուտակները պետք է պատրաստված լինեն օստեոսինթեզի հիմնարար պահանջների պահպանմամբ, ապահովեն ոսկրի ապահով ֆիկսացիան մինչ ոսկրի կոնսոլիդացիան: Ամբողջովին բիոդեգրադացիայի ենթարկվեն ~12 ամսվա ընթացքում՝ տարալուծվելով օրգանիզմի համար անվտանգ՝ ացխաթթվի և ջրի: Պետք է պարտադիր պարտաստված լինեն L-Լակտիդ (85%) գլիկոլիդ (15%) – ից (PLGA), որը կապահովի ամրության 85% 8 շաբաթվա ընթացքում, կապահովի ռեզորբցիայի ընթացքում հյուսվածքներում հեղուկի մինիմալ կուտակում և որպես հետևանք նվազագույնի կհասցնի հնարավոր բարդությունները: Մինչ 70°C տաքացնելիս պետք է լինի պլաստիկ, ինչը հնարավորություն կտա մոդելավորել անատոմիային համապատասխան: Նախատեսված լինեն հատուկ գանգադիմային հատվածի ռեկոնստրուկցիաների համար: Լինեն ռենտգեն նեգատիվ: Պտուտակները պետք է տեղակայված լինեն բլիստերներում՝ երկու և չորս հատով: 1. Ուղիղ թիթեղ՝ հաստությունը 0.8 մմ, երկարությունը 26 մմ, լայնությունը 6 մմ, անցքերի քանակը 4, տրամագծը 1.5 մմ, տուփում 1 հատ – 7 տուփ: 2. Ուղիղ թիթեղ՝ հաստությունը 0.8 մմ, երկարությունը 18 մմ, լայնությունը 6 մմ, անցքերի քանակը 2, տրամագծը 1.5 մմ, տուփում 1 հատ – 7 տուփ 3. Ուղիղ ադապտացվող թիթեղ՝ հաստությունը 0.8 մմ, երկարությունը 34 մմ, լայնությունը 6 մմ, անցքերի քանակը 8, տրամագծը 1.5 մմ, տուփում 1 հատ – 3 տուփ: 4. Ուղիղ ադապտացվող թիթեղ՝ հաստությունը 0.8 մմ, երկարությունը 34 մմ, լայնությունը 6 մմ, անցքերի քանակը 20, տրամագծը 1.5 մմ, տուփում 1 հատ-1տուփ: 5. Ակնակապճի եզրի ռեկոնստրուկցիաների համար նախատեսված աղեղնաձև թիթեղ՝ հաստությունը 0.8 մմ, երկարությունը 40.2 մմ, լայնությունը 6 մմ, անցքերի քանակը 10, տրամագծը 1.5 մմ, տուփում 1 հատ – 2 տուփ: 6. Ուղիղ երկշարք անցքերով թիթեղ՝ հաստությունը 0.8 մմ, երկարությունը 50 մմ, լայնությունը 11 մմ, անցքերի քանակը 2x10, տրամագծը 1.5 մմ, տուփում 1 հատ –2 տուփ: 7. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 1.5 մմ, երկարությունը 8.0 մմ. Բլիստերում 4 պտուտակ, տուփում 1 բլիստեր.- 9 տուփ: 8. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 1.5 մմ, երկարությունը 6.0 մմ. Բլիստերում 4 պտուտակ, տուփում 1 բլիստեր.- 9 տուփ: 9. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 1.5 մմ, երկարությունը 4.0 մմ. Բլիստերում 4 պտուտակ, տուփում 1 բլիստեր.- 9 տուփ: 10. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 1.5 մմ, երկարությունը 3.0 մմ. Բլիստերում 4 պտուտակ, տուփում 1 բլիստեր.- 9 տուփ: 11. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 2.0 մմ, երկարությունը 4.0 մմ. Բլիստերում 2 պտուտակ, տուփում 1 բլիստեր.-2 տուփ: 12. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 2.0 մմ, երկարությունը 6.0 մմ. Բլիստերում 2 պտուտակ, տուփում 1 բլիստեր.-2 տուփ: 13. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 2.0 մմ, երկարությունը 8.0 մմ. Բլիստերում 2 պտուտակ, տուփում 1 բլիստեր.-2 տուփ: 14. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 1.5 մմ, երկարությունը 3.0 մմ. Բլիստերում 2 պտուտակ, տուփում 1 բլիստեր.-2 տուփ: 15. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 1.5 մմ, երկարությունը 4.0 մմ. Բլիստերում 2 պտուտակ, տուփում 1 բլիստեր.-2 տուփ:	DePuy Synthes	Synthes GmbH	Շվեյցարիա

		16. Մաքսիլյար կորտիկալ պտուտակ՝ տրամագիծը 1.5 մմ, երկարությունը 6.0 մմ. Բլիստերում 2 պտուտակ, տուփում 1 բլիստեր.-2 տուփ: Բոլոր իմպլանտները՝ թիթեղները և պտուտակները պետք է պարտադիր լինեն ստերիլ փաթեթավորված, և ունենան արտադրության պահից սկսած երեք տարուց ոչ պակաս պահպանման շրջան: **Գործիքներին և տեղադրման համար անհրաժեշտ պարագաներին ներկայացվող պահանջները:** 1. Օրիգինալ AO\ASIF գործիք դիմածնոտային վիրաբուժության համար՝ պտուտակահանի բռնակ միջին չափի մինի-արագ միացումով և ֆիքսող պտտվող ներդուկով (երկարությունը 55մմ) պտուտակահանի աշխատող մասի համար, բռնակի երկարությունը 100մմ: Գործիքը պետք է պատրաստված լինի բժշկական չժանգոտվող պողպատից (Fe/Cr/Ni/Mo/Mn), համապատասխան միջազգային 5832-1 ստանդարտի և օստեոսինթեզի տեխնիկայից բխող պահանջներին: Գործիքը պետք պարտադիր ունենա լազերային (CE) մակնշում: Ախտահանումը պետք է կատարվի ավտոկլավացման ստանդարտ ռեժիմում 134 C° 3 Մթն. ճնշման տակ: Պետք է առաքվի ոչ ստերիլ վիճակում - **1 հատ:** 2. Օրիգինալ AO\ASIF գործիք գանգադիմային վիրաբուժության համար՝ ինքնածակող նշակիչ ոսկորը միաժամանակյա ծակելու և 1.5 մմ բիոռեզորբցիայի ենթարկվող կորտիկալ պտուտակներին համապատասխան ակոսի ձևավորման համար: Պետք է ունենա 8մմ ծակելիս խորության սահմանափակիչ, բռնակի հետ միացման մինի –արագ մեխանիզմ: Ունենա կարմիր գույնի մակնշում: Գործիքը պետք է պատրաստված լինի բժշկական չժանգոտվող պողպատից (Fe/Cr/Ni/Mo/Mn), համապատասխան միջազգային 5832-1 ստանդարտի և օստեոսինթեզի տեղնիկայից բխող պահանջներին: Գործիքը պետք պարտադիր ունենա լազերային (CE) մակնշում: Ախտահանումը պետք է կատարվի ավտոկլավացման ստանդարտ ռեժիմում 134 C° 3 Մթն. ճնշման տակ: Պետք է առաքվի ոչ ստերիլ վիճակում - **1 հատ:** 3. Օրիգինալ AO\ASIF գործիք գանգադիմային վիրաբուժության համար՝ ինքնածակող նշակիչ ոսկորը միաժամանակյա ծակելու և 1.5 մմ բիոռեզորբցիայի ենթարկվող կորտիկալ պտուտակներին համապատասխան ակոսի ձևավորման համար: Պետք է ունենա 6մմ ծակելիս խորության սահմանափակիչ, բռնակի հետ միացման մինի –արագ մեխանիզմ: Ունենա կարմիր գույնի մակնշում: Գործիքը պետք է պատրաստված լինի բժշկական չժանգոտվող պողպատից (Fe/Cr/Ni/Mo/Mn), համապատասխան միջազգային 5832-1 ստանդարտի և օստեոսինթեզի տեխնիկայից բխող պահանջներին: Գործիքը պետք պարտադիր ունենա լազերային (CE) մակնշում: Ախտահանումը պետք է կատարվի ավտոկլավացման ստանդարտ ռեժիմում 134 C° 3 Մթն. ճնշման տակ: Պետք է առաքվի ոչ ստերիլ վիճակում - **1 հատ:** 4. Օրիգինալ AO\ASIF գործիք գանգադիմային վիրաբուժության համար՝ ինքնածակող նշակիչ ոսկորը միաժամանակյա ծակելու և 1.5 մմ բիոռեզորբցիայի ենթարկվող կորտիկալ պտուտակներին համապատասխան ակոսի ձևավորման համար: Պետք է ունենա 4մմ ծակելիս խորության սահմանափակիչ, բռնակի հետ միացման մինի –արագ մեխանիզմ: Ունենա կարմիր գույնի մակնշում: Գործիքը պետք է պատրաստված լինի բժշկական չժանգոտվող պողպատից (Fe/Cr/Ni/Mo/Mn), համապատասխան միջազգային 5832-1 ստանդարտի և օստեոսինթեզի տեխնիկայից բխող պահանջներին: Գործիքը պետք պարտադիր ունենա լազերային (CE) մակնշում: Ախտահանումը պետք է կատարվի ավտոկլավացման ստանդարտ ռեժիմում 134 C° 3 Մթն. ճնշման տակ: Պետք է առաքվի ոչ ստերիլ վիճակում - **1 հատ:** 5. Օրիգինալ AO\ASIF գործիք գանգադիմային վիրաբուժության համար՝ պտուտակահանի աշխատող մաս (ծայրակալ) պետք է լինի խաչաձև ծայրով, ունենա պտուտակների բռնիչ՝ նախատեսված բիոռեզորբցիայի ենթարկվող 1.5մմ պտուտակների համար: Բռնիչը պետք է համատեղելի լինի պտուտակների 2.9մմ գլխիկի հետ: Աշխատանքային մասի երկարությունը 92մմ: Բռնակին միացվող մասը մինի AO: Գործիքը պետք է պատրաստված լինի բժշկական չժանգոտվող պողպատից (Fe/Cr/Ni/Mo/Mn), համապատասխան միջազգային 5832-1 ստանդարտի և օստեոսինթեզի տեխնիկայից բխող պահանջներին: Գործիքը պետք պարտադիր ունենա լազերային (CE) մակնշում: Ախտահանումը պետք է կատարվի ավտոկլավացման ստանդարտ ռեժիմում 134 C° 3 Մթն. ճնշման տակ: Պետք է առաքվի ոչ ստերիլ վիճակում - **1 հատ:** 6. Օրիգինալ AO\ASIF գործիք դիմածնոտային վիրաբուժության համար՝ շաղափ նախատեսված 2.0մմ տրամագծով և 8մմ երկարությամբ բիոռեզորբցիայի ենթարկվող պտուտակների համար՝ ոսկրում անցքի ձևավորման համար:			

		Ծակող մասը պետք է ունենա երկու ակոս, տրամագիծը 1.5մմ: Ընդհանուր երկարությունը 44.5մմ, խորության կարգավորիչը 8մմ: J-աձև միացման մեխանիզմով - **1 հատ:** 7. Ստերիլ հեղուկների տաքացման սարքավորում: Սարքավորումը պետք է նախատեսված լինի բիոռեզորբցիայի ենթարկվող գանգադիմային վիրաբուժության համար նախատեսված թիթեղները տեղադրմանը նախապատրաստելուն: Պետք է գործարկվի ստերիլ փաթեթների հետ մեկտեղ: Պետք է թույլ տա 15 րոպեյի ընթացքում ստերիլ հեղուկը տաքացնել 65⁰-ից 75 ⁰C: Պետք է ունենա սնուցման անջատման և միացման կոճակ: Աշխատանքի ինդիկատոր կապույտ գույնի, հեղուկի պատրաստ լինելու ինդիկատոր՝ կանաչ: Ունենա հեղուկի մակարդակի սանդղակ՝ նախնական, նվազագույն, առավելագույն: Հեղուկի նախնական ծավալը պետք է կազմի 50 մմ, աշխատանքային հեղուկի ծավալը ՝ 450-500մմ: Պատեք է նախատեսված լինի 220-240վ 50-60 հերց փոփոխական հոսանքի ցանցում աշխատելու համար: Հոսանքի ծախսը՝ 400VA / 230վատտ: Ապպահովիչը պետք է լինի 5 A, 250 B: Չափերը՝ (երկարությունը, լայնություն, բարձրություն) 257 x 188.8 x 119.1 ±1.5մմ: Քաշը՝ 1.30 կգ ±10% - **1 հատ:** 8. Միջնորմներ նախատեսված բիոռեզորբցիայի ենթարկվող թիթեղների տեղադրման պատրաստելու համար ստեիլ հեղուկի տաքացման սարքի հետ աշխատանքի համար: Չափերը՝(երկարություն, լայնություն) 1120 x 1120 ±20մմ: Տեղափոխման և պահպանման չափերը՝ (երկարություն, լայնություն) 95 x 50 մմ: Հաստությունը 0.12 ±0.0127մմ: Քաշը՝ 180r ±15% Պատրաստված լինեն պոլիուրետանից լինեն ստերիլ փաթեթավորված- **24 հատ:** 9. 1.5 և 2.0մմ բիոռեզորբցիայի ենթարկվող թիթեղների գործիքների պահպանման, տեղափոխման և ախտահանման վարիո արկղ: Պետք է լինի կլոր անցքերվ, ունենա անջատվող տակամաս: Ունենա գործիքների տեղադրման համար նախատեսված տեղեր: Չափերը՝ (երկարությունը, լայնություն, բարձրություն) 257x 250x 117.5 ±1մմ, բարձրությունը բռնակների և ոտիկների հետ մեկտեղ 126 ±1մմ, պատրաստված չժանգոտվող պողպատից- **1 հատ:** 10. 1.5 և 2.0մմ բիոռեզորբցիայի ենթարկվող թիթեղների գործիքների պահպանման, տեղափոխման և ախտահանման վարիո արկղի ½ չափի կափարիչ: Պետք է լինի կլոր անցքերով, որը հնարավորություն կտա կատարել ախտահանում: Չափերը՝ (երկարությունը, լայնություն, բարձրություն) 256x 250±1մմ, 5.5 ±0.5մմ: Պետք է պատրաստված լինի չժանգոտվող պողպատից- **1 հատ:**			
2.	***Օրթոպեդիկ իմպլանտներ/*** Ազդրոսկրի կոտրվածքների բուժման, ինտրամեդուլյար անտեգրադ և ռետրոգրադ մուտքով օստեոսինթեզների համար նախատեսված, կլինիկայում առկա իմպլանտների լրացում/	1.Պարուրաձև սայր, տիտանից, 70մմ, ոսկեգույն-2 հատ 2.Պարուրաձև սայր, տիտանից, 75մմ, ոսկեգույն-2 հատ 3.Պարուրաձև սայր, տիտանից, 80մմ, ոսկեգույն-2 հատ 4.Պարուրաձև սայր տիտանից, 85մմ, ոսկեգույն-2 հատ 5.Պարուրաձև սայր, տիտանից, 90 մմ, ոսկեգույն-2 հատ 6.Պարուրաձև սայր, տիտանից, 95 մմ, ոսկեգույն-2 հատ 7. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 9,0մմ, երկարությունը՝ 320մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 8. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 9,0մմ, երկարությունը՝ 340մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 9. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 9,0մմ, երկարությունը՝ 360մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 10. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 9,0մմ, երկարությունը՝ 380մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 11. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 9,0մմ, երկարությունը՝ 400մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 12. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 9,0մմ, երկարությունը՝ 420մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ	DePuy Synthes	Synthes GmbH	Շվեյցարիա

		13. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 10,0մմ, երկարությունը՝ 320մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 14. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը10,0մմ, երկարությունը՝ 340մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 15. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 10,0մմ, երկարությունը՝ 360մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 16. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 10,0մմ, երկարությունը՝ 380մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 17. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 10,0մմ, երկարությունը՝ 400մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 18. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 10,0մմ, երկարությունը՝ 420մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 19.Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 10,0մմ, երկարությունը՝ 440մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 20. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 110մմ, երկարությունը՝ 320մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 21. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը11,0մմ, երկարությունը՝ 340մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 22. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 11,0մմ, երկարությունը՝ 360մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 23. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 11,0մմ, երկարությունը՝ 380մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 24. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 11,0մմ, երկարությունը՝ 400մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 25. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 11,0մմ, երկարությունը՝ 420մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 26 .Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 11,0մմ, երկարությունը՝ 440մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 27.Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը12,0մմ, երկարությունը՝ 340մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 28. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 12,0մմ, երկարությունը՝ 360մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 29. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 12,0մմ, երկարությունը՝ 380մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 30. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 12,0մմ, երկարությունը՝ 400մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 31. Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 12,0մմ, երկարությունը՝ 420մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 32 .Շթիվթ՝ անտեգրադ, ռետրոգրադ տրամագիծը 12,0մմ, երկարությունը՝ 440մմ, Կոնյուլացված, պատրաաստված 'TAN համաձուլվածքից , ստերիլ, բաց կանաչ գույնի-1 հատ 33. Պարուրաձև սայրի արգելափակիչ, կոնյուլացված, երկարացումը 0, TAN համաձուլվածքից, ոսկեգույն, ստերիլ, 26 հատ 34. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 28 մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-1 հատ 35. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 90 մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է			

		պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -3 հատ 36. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 85 մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -8 հատ 37. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 80 մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-8 հատ 38. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 76 մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-8 հատ 39. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 72 մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-8 հատ 40. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 68 մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-2 հատ 41. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 64մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի -2 հատ 42. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 60մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-4 հատ 43. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 58մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-8 հատ 44. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 56մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-6հատ 45. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 54մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -3հատ 46. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 52մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -2հատ 47. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 50մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -2 հատ 48. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 48մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -2հատ 49. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 46մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -2հատ 50. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 44մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -8հատ 51. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 42մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -8հատ 52. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 40մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -6հատ 53. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 38մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -6հատ 54. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 36մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-4հատ 55. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 34մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի,-4հատ 56. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 32մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -8հատ 57. Արգելափակվող պտուտակ, տրամագիծը 5.0 մմ, երկարությունը 30մմ, շլիցը՝ "Stardriver"T 25: Պետք է պատրաստված լինի TAN համաձուլվածքից, բաց կանաչ գույնի, -6հատ			

	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ / Կլինիկայում առկա CAD ուժային սարքավորման համար նախատեսված ծախսվող նյութերի լրացում: քսայուղ, օսցիլացնող և ռեցիպրոկ սայրեր, շաղափներ, խողովակներ/	1.Օսցիլացնող սղոցի սայր: Ընդհանուր երկարությունը 116մմ/աշխատանքային մասի երկարությունը 95մմ/լայնությունը 19մմ/ հաստությունը 1.19մմ-6 հատ: 2.Օսցիլացնող սղոցի սայր: Ընդհանուր երկարությունը 116մմ/աշխատանքային մասի երկարությունը 95մմ/լայնությունը 19մմ/ հաստությունը 1. 27մմ.-6 հատ: 3.Օսցիլացնող սղոցի սայր: Ընդհանուր երկարությունը 116մմ/աշխատանքային մասի երկարությունը 95մմ/լայնությունը 19մմ/ հաստությունը 1.0մմ.-6 հատ: 4.Օսցիլացնող սղոցի սայր: Ընդհանուր երկարությունը 116մմ/աշխատանքային մասի երկարությունը 95մմ/լայնությունը 25մմ/ հաստությունը 1. 19մմ.-6 հատ: 5.Օսցիլացնող սղոցի սայր: Ընդհանուր երկարությունը 116մմ/աշխատանքային մասի երկարությունը 95մմ/լայնությունը 25մմ/ հաստությունը 1. 27մմ.-6 հատ: 6.Օսցիլացնող սղոցի սայր: Ընդհանուր երկարությունը 116մմ/աշխատանքային մասի երկարությունը 95մմ/լայնությունը 25մմ/ հաստությունը 1. 0մմ. -6հատ: 7.Օսցիլացնող սղոցի սայր: Ընդհանուր երկարությունը 111մմ/աշխատանքային մասի երկարությունը 90մմ/լայնությունը 12,5մմ/ հաստությունը 1. 27մմ.- 6 հատ: 8.Օսցիլացնող սղոցի սայր: Ընդհանուր երկարությունը 111մմ/աշխատանքային մասի երկարությունը 90մմ/լայնությունը 12,5մմ/ հաստությունը 1.0մմ.- 6 հատ: 9.Օսցիլացնող սղոցի սայր: Ընդհանուր երկարությունը 81մմ/աշխատանքային մասի երկարությունը 60մմ/լայնությունը 25մմ/ հաստությունը 0.89մմ. -6 հատ: 10.Սայր ռեցիպրոկ սղոցի համար: Ընդհանուր երկարությունը 102մմ/աշխատանքային մասի երկարությունը 80մմ/լայնությունը 10մմ/ հաստությունը 1.1 մմ- 4 հատ: 11.Սայր ռեցիպրոկ սղոցի համար: Ընդհանուր երկարությունը 70մմ/աշխատանքային մասի երկարությունը 80մմ/լայնությունը 10մմ/ հաստությունը 1. 27 մմ- 4 հատ: 12.Սայր ռեցիպրոկ սղոցի համար կրծքային: Աշխատանքային մասի երկարությունը 40մմ/լայնությունը 10մմ/ հաստությունը 1.1 մմ - 4 հատ: 13.Շաղափ, ընդհանուր երկարությունը 100մմ, ծողը 70մմ, տրամագիծը 2մմ, երկու շեղբով, միացումը՝ արագ միացման համակրգ- 3 հատ: 14.Շաղափ, ընդհանուր երկարությունը 180մմ, ծողը 155 մմ, տրամագիծը 2.5մմ, երկու շեղբով, միացումը՝ արագ միացման համակրգ - 3 հատ: 15.Շաղափ, ընդհանուր երկարությունը 110մմ, ծողը 85մմ, տրամագիծը 2.5մմ, երկու շեղբով, միացումը՝ արագ միացման համակրգ-3 հատ: 16.Շաղափ, ընդհանուր երկարությունը 250մմ, ծողը 225մմ, տրամագիծը 2.5մմ, կոլիբրացված, լազերով կատարված խորության չափման սանդգակ , արգելակող մեխանիզմով, երկու շեղբով, միացումը՝ արագ միացման համակրգ-3 հատ: 17.Շաղափ, նախատեսված արգելափակվող թիթղների համար, ընդհանուր երկարությունը 165մմ, տրամագիծը 2.8մմ, երկու շեղբով, միացումը՝ արագ միացման համակրգ- 3 հատ: 18.Շաղափ, ընդհանուր երկարությունը 165մմ, տրամագիծը 2.8մմ, , միացումը՝ AO\ASIF - 3 հատ: 19.Շաղափ, ընդհանուր երկարությունը 250մմ, ծողը 225մմ, տրամագիծը 2.8մմ, կոլիբրացված,լազերով կատարված խորության չափման սանդղակ , արգելակող մեխանիզմով, երկու շեղբով, միացումը՝ արագ միացման համակարգ- 3 հատ: 20.Շաղափ, ընդհանուր երկարությունը 145մմ, տրամագիծը 3.2 մմ, երեք շեղբով, միացումը՝ արագ միացման համակարգ-3 հատ: 21.Շաղափ, ընդհանուր երկարությունը 225մմ, ծողը 200մմ, տրամագիծը 3.2 մմ, երկու շեղբով, միացումը՝ արագ միացման համակարգ-3 հատ: 22.Հատուկ քսայուղ նախատեսված Սինթեզ օդաճնշական ուժային սարքավորումների համար 40 մլ-5 հատ: 23.Ճկուն խողովակ նախատեսված Սինթեզ բժշկական օդային ուժային սարքավորման համար: Պետք է լինի	DePuy Synthes	Synthes GmbH	Շվեյցարիա

		երկշերտ՝(ներմղող, արտազատող) ապահովի ճնշած օդի կամ ազոտի ներմղումը դեպի սարքավորում ինչպես նաև ապահովի հետհոսքը: Միացման մեխանիզմները պետք է ամբողջովին համապատասխան լինեն Սինթեզ օդային ուժային սարքավորոմանը.Նախատեսված 7-8 մթն. ճնշման տակ աշխատելու համար: Երկարությունը 3 մ.- 1 հատ: 24.Ճկուն խողովակ նախատեսված Սինթեզ բժշկական օդային ուժային սարքավորման համար: Պետք է լինի երկշերտ՝(ներմղող, արտազատող) ապահովի ճնշած օդի կամ ազոտի ներմղումը դեպի սարքավորում ինչպես նաև ապահովի հետհոսքը: Միացման մեխանիզմները պետք է ամբողջովին համապատասխան լինեն Սինթեզ օդային ուժային սարքավորոմանը.Նախատեսված 7-8 մթն. ճնշման տակ աշխատելու համար: Երկարությունը 5 մ.- 1 հատ:			
4.	***Վիրաբուժական իմպլանտներ*** / Գանգադիմային կմախքի կոտրվածքների ռեկոնստրուկցիաների և ներոսկրային օսթեոսինթեզի համար նախատեսված MatrixMIDFACE իմպլանտների համալրում/:	Իմպլանտներին ներկայացվող ընդհանուր պահանջներ • Վերոսկրային օստեոսինթեզի համար նախատեսված օրիգինալ AO\ASIF իմպլանտներ • Իմպլանտները պետք է ամբողջովին համապատասխան լինեն գեոմետրիկ պարամետրերով /պտուտակների ձևի և թիթեղների անցքերի ձևի լիակատար համատեղելիություն/ • Իմպլանտները պետք է համատեղելի լինեն քիմիական պարամետրերով /բոլոր իմպլանտները պետք է պատրաստված լինեն նույն համաձուլվածքից՝ Ti/ • Անատոմիական նախապատրաստված թիթեղների վրա անցքերը պետք է ապահովեն անատոմիորեն հիմնավորված անկյան տակ պտուտակների ամրացումը • գլխիկի ձգման համար նախատեսված մասը /շլից/ պետք է լինի խորը աստղաձև • Պտուտակները, ըստ մարմնի ձևի, պետք է լինեն ինքնաձակող և ինքնակտրող • Իմպլանտեը պետք ամբողջովին համապտասխան լինեն կլինիկայում առկա MatrixMIDFACE հավաքի գոծիքներին և առկա մնացորդ իմպլանտերին: Իմպլանտներին ներկայացվող անհատական պահանջները Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.55 մմ, երկարությունը 4 մմ, կլիպսայում 4 հատ- 6 կլիպսա, Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.55 մմ, երկարությունը 6 մմ, կլիպսայում 4 հատ- 8 կլիպսա: ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.55 մմ, երկարությունը 8 մմ, կլիպսայում 4 հատ- 3 կլիպսա: Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.55 մմ, երկարությունը 10 մմ, կլիպսայում 4 հատ- 2 կլիպսա: Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.55 մմ, երկարությունը 12 մմ, կլիպսայում 4 հատ- 1 կլիպսա: Պահուստային, ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.8 մմ, երկարությունը 4 մմ, կլիպսայում 1 հատ- 4 կլիպսա: Պահուատային, ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.8 մմ, երկարությունը 6 մմ, կլիպսայում 1 հատ- 4 կլիպսա: Պահուատային, ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.8 մմ, երկարությունը 8 մմ, կլիպսայում 1 հատ- 4 կլիպսա: Պահուստային, ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.8 մմ, երկարությունը 10 մմ, կլիպսայում 1 հատ- 4կլիպսա: Պահուատային, ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 1.8 մմ, երկարությունը 12 մմ, կլիպսայում 1 հատ- 4կլիպսա: Ակնակապիճի եզրի համար նախատեսված թիթեղ, 12 անցք, հաստությունը 0.5 մմ- 4 հատ: Ադապտացիոն թիթեղ, 20 անցք, հաստությունը 0.5 մմ- 3 հատ: L-աձև թիթեղ, ձախակողմյա, 2+3 անցք, հաստությունը 0.7 մմ- 1 հատ: L-աձև թիթեղ, աջակողմյա, 2+3 անցք, հաստությունը 0.7 մմ- 1 հատ: L-աձև թիթեղ, ձախակողմյա, 3+4 անցք, հաստությունը 0.7 մմ- 1 հատ: L-աձև թիթեղ, աջակողմյա, 3+4 անցք, հաստությունը 0.7 մմ- 1 հատ: Ակնակապիճի եզրի համար նախատեսված թիթեղ, 12 անցք, հաստությունը 0.7 մմ- - 4 հատ: Ադապտացիոն թիթեղ, 20 անցք, հաստությունը 0.7մմ- 4 հատ; Ստորին ծնոտի անկյունային ռեկոնստրուկցիոն թիթեղ, աջակողմյա7+23 անցք, հաստությունը 1.5 մմ 3հատ Ստորին ծնոտի անկյունային ռեկոնստրուկցիոն թիթեղ, ձախակողմյա 7+23 անցք, հաստությունը 1.5 մմ-3 հատ Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 2.0 մմ, երկարությունը 6 մմ, կլիպսայում 4 հատ- 6 կլիպսա: Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 2.0 մմ, երկարությունը 8 մմ, կլիպսայում 4 հատ- 10 կլիպսա: Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 2.0 մմ, երկարությունը 10 մմ, կլիպսայում 4 հատ- 10 կլիպսա: Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 2.0 մմ, երկարությունը 12 մմ, կլիպսայում 4 հատ- 3 կլիպսա:	DePuy Synthes	Synthes GmbH	Շվեյցարիա

		Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 2.4 մմ, երկարությունը 6 մմ, կլիպսայում 4 հատ- 4 կլիպսա: Ինքնակտրող պտուտակ, տրամագիծը 2.4 մմ, երկարությունը 8 մմ, կլիպսայում 4 հատ- 4 կլիպսա: Ստորին ծնոտի ձգված, երկար, բարակ միջին հատվածով, ճկուն թիթեղ,2+2անցք, հաստությունը 1.0 մմ-6 հատ: Ստորին ծնոտի ձգված, երկար, բարակ միջին հատվածով, ճկուն թիթեղ, 3+3 անցք, հաստությունը 1.0մմ-6 հատ: Ստորին ծնոտի ուղիղ ձգված երկար միջին հատվածով թիթեղ, 2+2 անցք, հաստությունը 1.25 մմ- 6 հատ: Ստորին ծնոտի ուղիղ, ձգված երկար միջին հատվածով թիթեղ, 3+3 անցք, հաստությունը 1.25 մմ- 6 հատ: Ստորին ծնոտի ուղիղ, երկար ադապտացվող թիթեղ, 4 անցք, հաստությունը 1.0 մմ- 5 հատ: Ստորին ծնոտի ուղիղ երկար ադապտացվող թիթեղ, 6 անցք, հաստությունը 1.0 մմ- 5 հատ: Ստորին ծնոտի ուղիղ երկար ադապտացվող թիթեղ, 12 անցք, հաստությունը 1.0 մմ- 5 հատ: Ստոր ակնակապճային հավիարաձև թիթեղ հաստությունը 0.2 մմ- 2 հատ: Ստոր ակնակապճային հավիարաձև թիթեղ հաստությունը 0.3 մմ- 2 հատ: Ստոր ակնակապճային հավիարաձև թիթեղ հաստությունը 0.4 մմ- 2 հատ: Ակնահատակի անատոմյական թիթեղ հաստությունը 0.3 մմ- 1 հատ: Ակնահատակի ունիվերսալ թիթեղ հաստությունը 0.4 մմ- 1 հատ:			

Ծանոթություն. Ապրանքները պետք է ունենան. (Ներկայացվում են մատակարարման ժամանակ)

- Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագիր պատճեն -
- Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիրը:
- Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 զորամաս (ք. Աբովյան)

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումը՝ 2017թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 30.11.2017թ.
1.	**Վիրաբուժական իմպլանտներ** /Գանգադիմային հատվածի ռեկոնստրուկցիաների համար նախատեսված բիոդեգրադացիայի ենթարկվող մոդելավորվող թիթեղների և պտուտակներ հավաք՝ տեղադրման համար անհարաժեշտ գործիքների հետ/	հավաքածու	1	14,620,000	14,620,000	1
2.	***Օրթոպեդիկ իմպլանտներ/*** Ազդրոսկրի կոտրվածքների բուժման, ինտրամեդուլյար անտեգրադ և ռետրոգրադ մուտքով օստեոսինթեզների համար նախատեսված, կլինիկայում առկա իմպլանտների լրացում/	հավաքածու	1	16,450,000	16,450,000	1
3.	***Բժշկական այլ գործիքներ և պարագաներ*** / Կլինիկայում առկա CAD ուժային սարքավորման համար նախատեսված ծախսվող նյութերի լրացում: քսայուղ, օսցիլացնող և ռեցիպրոկ սայրեր, շաղափներ, խողովակներ/	հավաքածու	1	6,120,000	6,120,000	1
4.	***Վիրաբուժական իմպալնտներ*** / Գանգադիմային կմախքի կոտրվածքների ռեկոնստրուկցիաների և ներոսկրային օսթեոսինթեզի համար նախատեսված MatrixMIDFACE իմպլանտների համալրում/:	հավաքածու	1	11,320,000	11,320,000	1
	Ընդամենը				**48,510,000**	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/24-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար /դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝	
				Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.17թ.
1.	**Վիրաբուժական իմպլանտներ** /Գանգադիմային հատվածի ռեկոնստրուկցիաների համար նախատեսված բիոդեգրադացիայի ենթարկվող մոդելավորվող թիթեղների և պտուտակներ հավաք՝ տեղադրման համար անհարաժեշտ գործիքների հետ/	33181330/8/4/4	14,620,000	14,620,000	14,620,000
2.	***Օրթոպեդիկ իմպլանտներ/*** Ազդրոսկրի կոտրվածքների բուժման, ինտրամեդուլյար անտեգրադ և ռետրոգրադ մուտքով օստեոսինթեզների համար նախատեսված, կլինիկայում առկա իմպլանտների լրացում/	33181290/1/4/4	16,450,000	16,450,000	16,450,000
3.	***Բժշկական այլ գործիքներ և պարագաներ*** / Կլինիկայում առկա CAD ուժային սարքավորման համար նախատեսված ծախսվող նյութերի լրացում: քսայուղ, օսցիլացնող և ռեցիպրոկ սայրեր, շաղափներ, խողովակներ/	33141211/181/4/4	6,120,000	6,120,000	6,120,000
4.	***Վիրաբուժական իմպալնտներ*** / Գանգադիմային կմախքի կոտրվածքների ռեկոնստրուկցիաների և ներոսկրային օսթեոսինթեզի համար նախատեսված MatrixMIDFACE իմպլանտների համալրում/:	33181330/10/4/4	11,320,000	11,320,000	11,320,000
	Ընդամենը		**48,510,000**	**48,510,000**	**48,510,000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-9/24-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-9/24-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն